

## ՎԵՐԱՊՐԱՆԻ ՀՈՒՇԵՐԻՑ

## ԱՆՑՅԱԼԻ ԱՆՄԱՐ ԱՅՐՈՂ ՀՈՒՇԵՐԸ

Երկար եմ ապրում, 95 տարի: Կանգնած եմ ապրածս դարի գագաթին և հիշում եմ կյանքիս անցյալ օրերի այրող դեպքերը, սիրտս լալիս է, տնքում է ցավից:

Ծնվել եմ Արևմտյան Հայաստանում, Վանա լճի հարավային լեռնաստանում՝ Ռշտունիքի Հայոց ձորի Տշող գյուղում, ուր հին դարերում քաջաբազուկ մեր Հայկ նահապետը նեպահարեց Բելին:

Երբ մանուկ էի, 7-8 տարեկան, մեր հայրական օջախի գառնուկների նման անհոգ ու զվարթ, ընկերներիս հետ խաղում էի գյուղին մոտակա կանաչ հանդերում, հոսող առվակի գուլալ ջրերում:

1915 թվականի գարնանամուտին երկինքը ծածկվեց սև, մութ ամպերով, մեծ կարկուտ տրեղաց մեր Վասպուրական աշխարհի վրա:

Այդ անեղ օրերին սիրելի հայրս՝ Հովհաննես Մուրադյանը, և Աղթամարի վանքի վանահայր Դանիել Զադյանը, 80 քաջերով կռվի ելան ընդդեմ ջարդարարների մի մեծ խմբի: Կյանքի ու մահվան կռիվ մղեցին և պաշտպանեցին Հիրիճի լեռնանցքը, Շապախ գավառի Փեսանդաշտ փանող միակ ճանապարհը, կոպորաձներից փրկեցին փասնյակ գյուղերի հայ բնակչությանը: Այդ անհավասար կռվում 18 այլոց հետ զոհվեց իմ հայրը՝ հրամանավարը: Նրա դիակը, արյամբ շաղախված, մեր գյուղը բերին մթին գիշերով, թուրքերից թաքուն իսկույն թաղեցին:

Ապա զինյալ թուրքերը մտան մեր գյուղը: Մեր փանը սպանեցին հիվանդ պառկած իմ ծեր պապին, փանը մնացած հղի հարսին, իսկ տաքիս գլխին խփեցին, կուրացրեցին: Մեր շեն փունը կրակ տվին ու հեռացան: Ես որբացա, անբախտ դարձա: Վաղ լուսաբացին սարսափահար, լալով, ողբալով փախա մեր փանից, հասա ծովափը, Փշավանց գյուղը, սև բոթը տարա քեռուս՝ Գարեգինին:

1915 թվականի հուլիս-օգոստոս ամիսներին անամալ երկնքից արեգակը կրակ էր թափում հայ գաղթականների վրա: Լեռներից պոկված հեղեղի նման Արևմտյան Հայաստանի բոլոր կողմերից տեղահան եղան հայերը:

Գաղթեց նաև մեր գյուղը: Սիրելի մայրս, փոքրիկ եղբորս իր շալակն առած, իմ ձեռքը բռնած, քայլում էր հոգնած ու դանդաղ, քարոտ ու փշոտ, արյունով ներկված ճանապարհներով: Երբ բազմահազար մարդկանց քարավանը հասավ Բանդու Մահ գետի փայտյա կամրջին, իսկույն կանգ առավ: Գետի երկու կողմերի ժայռոտ ափերից մեզ վրա եկան անթիվ, անհամար զինված ու անզեն բրդեր ու թուրքեր: Կրակոցներով, սպառնալիքներով կողոպտում էին անզեն հայերին, խլում նրանցից ոսկի, արծաթ, թանկարժեք զարդեր:

Այնուհետև սկսվեց փախուստը, սուգն ու վայնասունը: Թո՛ղ ու բո՛հի մեջ ես կորցրեցի մորս, եղբորս և հարազատներին: Շատ փնտրեցի նրանց, բայց չգտա, լացով, ողբալով նսրեցի ճամփի մի քարին ու դիպում էի անցնողներին: Ավանապետ եղա մի ահավոր տեսարանի. երկու թուրքեր ճիպտաբան էին անում մի ծերունու, խլելով նրանից ծոցում պահ-

ված ոսկիներն ու զարդերը, ապա կտրեցին կոկորդը և գցեցին ճամփին և անտառներ հեռացան: Մարտափից կուչ էի եկել, չգիտեի՝ ուր գնալ և ինչ անել:

Քիչ հետո պետա, որ երեք զինյալներ 5 աղջկների ձեռքերը կապած բշում էին դեպի կամուրջը: Աղջիկները փախան, գետի բարձրադիր ափից իրենց գցեցին վարարած գետը:

Նոգնած, սարսափած պետածս ահավոր տեսարաններից, քաղցից թուլացած կուչ եկա հսկա քարի հետևում: Լսեցի փոքրիկ երեխայի լացի ձայն, շուտ եկա և զարհուրեցի: Փոքրիկ մանկիկը մորը գրկած լացով խնդրում էր. «Մամա, սոված եմ, ծիծ փուր, որ ուտեն»: Մայրը թեք պառկած, արյամբ շաղախված, վաղուց սպանված, կապույտ աչքերը երկնքին հառած, լուռ էր փխրագին: Նոգիս խռովվեց, մտրեցա վախով ու սարսափով, գրկեցի փոքրիկին, մի քիչ հեռացա: Աստված մեզ փրկեց, գթաց որբերիս: Ճանապարհով անցնող երեք հեծյալներ՝ հայ կամավորներ, մտրեցան մեզ, գրկեցին, դրեցին իրենց ձիերի վրա ու տարան Իգդիր: Նրանք մեզ հանձնեցին որբահավաքի անդամներին և իրենք հեռացան:

Այդ օրվանից կրեցի որբության բոլոր տառապանքները: Ամբողջ 10 տարի տարբեր որբանոցներում ես հասակ առա, սակայն տեսածս ահավոր պատկերները հանգիստ չեն տալիս և ինձ ուղեկցում են ողջ կյանքումս:

Ներագայում կրթություն ստացա: 1940 թ. առաջիններից մեկն էի, որ արժանացա հանրապետության վաստակավոր ուսուցչի պատվավոր կոչմանը և այսպիսով հետեղեռնյան ողջ գիտակցական կյանքս նվիրեցի մատաղ սերնդի կրթության ու դաստիարակության ազգանվեր գործին:

ԱԶԱՏ ՀՈՎՀԱՆՆԵՍԻ ՌԾՏՈՒՆԻ